## «ՄՈՒՐՃԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

---

«Մուրճի» ներկայ համարից բաց ենք անում եկող 1902 թուի բաժանորդագրութիւնը։ Այս առիթով պարտք ենք համարում մի թեթեւ հաշիւ տալ մեր հասարակութեան։

Անցեալ տարուայ վերջին, երբ մենք ընդունում էինք «Մուրճը» նախկին խմբագրութիւնից, յայտնի դարձաւ որ ամսագիրը այդ տարին ունեցել է ընդամենը 260 բաժանորդ*)։ Համաձայն մեր խոստման, այդ բաժանորդներին «Մուրճը» ներկայ տարուայ առաջին կիսամեակում ձրի ուղարկուեց, որովհետեւ նրանք անցեալ տարուայ երկրորդ կիսամեակում չէին ստացել ամսագիրը։ Այնպէս որ, սկսելով «Մուրճի» նոր շրջանը, մենք աչքի առաջ չունէինք մշտական, հաստատ բաժանորդների փոքր ի շատէ նշանաւոր թիւ, որ կարողանար ապահովել ամսագրի գոյութիւնը գոնէ մի թեթեւ չափով։ Պէտք էր սկսել ամեն ինչ նորից, նոր ստեղծել վճարող ընթերցողների մի աչքի ընկնող թիւ։

Այս պայմանների մէջ մենք բաց արինք «Մուրճի» նոր շրջանի առաջին տարուայ բաժանորդագրութիւնը և պէտք է գոհունակութեամբ արձանագրենք որ գործը հէնց սկզբից ցոյց տուեց, թէ մենք կարող ենք յոյս դնել հա-

---

*) Դրանցից նորոգեցին իրանց բաժանորդագրութիւնը միայն 120 հոգի։

սարակութեան աջակցութեան վրայ։ Ուստի «Մուրճի» հէնց առաջին համարում մենք յայտարարեցինք, որ ամսագրի ծաւալը կը լինի 8 տպագրական թերթ կամ 256 երես և թէ ամսագիրը այդպիսի ծաւալով ապահովելու համար հարկաւոր է որ մենք ունենանք առնուազն 800 բաժանորդ։ Բայց ամբողջ տարուայ ընթացքում մենք չը հետևեցինք մեր խոստացած ծաւալին, այլ, քաջալերուելով մեր ընթերցողների և մամուլի համակրանքից, հրատարակեցինք, նիւթական զոհողութիւններ չը խնայելով, աւելի մեծ ծաւալով, այն է 10 տպագրական թերթ կամ 320 երես։

Մենք կամենում էինք ցոյց տալ, որ եթէ հայերի մէջ չը կայ մի հաստ ամսագիր, որ ընթերցանութեան առատ նիւթ մատակարարէր հասարակութեան, դրա պատճառն այն չէ, որ չը կան գրական աշխատաւորներ, չը կայ աւելի շատ աշխատելու եռանդ և ցանկութիւն։ Եւ մի տարուայ փորձը ցոյց տուեց որ մենք սխալուած չէինք։

Նոյն այդ փորձը ցոյց տուեց և այն, որ ամսագրի զարգացման դէմ եթէ կայ մի խոչընդոտ, դա ընթերցող հասարակութեան պէտք է վերագրել և ոչ թէ խմբագրութեան։ «Մուրճը» այժմ ունի 650 բաժանորդ, մի թիւ, որ բաւական չէ նոյն իսկ մեր խոստացած 256 երեսանոց ծաւալով հրատարակելու համար։

Ահա այդ հանգամանքի վրայ ենք հրաւիրում հասարակութեան ուշադրութիւնը։ Եթէ դուք զգում էք, որ անհրաժեշտութիւն է մի մեծ ամսագիր ունենալը, աջակցեցէք մեզ, որպէս զի մենք էլ շարունակենք այնպէս, ինչպէս սկսել ենք։ Մեր կողմից մենք խոստանում ենք ոչինչ ջանք չը խնայել, որ «Մուրճը» անդադար առաջադիմէ, զարգանայ իբրև գրական-հասարակական մի ամսագիր, որ մեզանում մանաւանդ կատարելու շատ կարևոր դեր ունի։ Միայն հարկաւոր է որ հասարակութիւնն էլ ճանաչէ իր պարտականութիւնը, այսինքն տայ մեզ բաժանորդների մեծ թիւ։

Միայն այդ կերպով կարելի է ապահովել գրական գործը։ Միայն այն ժամանակ, երբ պարտաճանաչ են երկու կողմերն էլ՝ թէ խմբագրութիւնը և թէ հասարակութիւնը, կարելի կը լինի ասել թէ ամսագիրը ազատուած է պատահականութիւններից և կարող է համարձակ առաջ գնալ։

Մենք ոչինչ չենք ծածկում հասարակութիւնից։ Եւ մեզ մնում է սպասել նրա վճռին։